ԴԱՍԱՎՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂՈՒՄ ԳԻՇԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մաս VI

Մարտական իրավիճակի պայմաններում զորքերը միշտ չէ, որ վարում են միայն ակտիվ ռազմական գործողություններ: Նրանք կարող են տեղակայվել իրենց հատկացված տարածքներում մինչև մարտական առաջադրանք ստանալը կամ, ունենալով մարտական առաջադրանք, պատրաստվել դրա կատարմանը:

Ստորաբաժանումների գտնվելու վայրի տարածքը նշանակվում է բնական ապաստարաններ ունեցող տեղանքում (անտառային տարածքներ, պուրակներ, ձորեր, հատումներ), որոնք թույլ են տալիս ապահովել ստորաբաժանումների աննկատ դասավորությունը: Այս պահանջը շատ կարևոր է, եթե հաշվի առնենք օդային հետախուզության հնարավորությունները, այդ թվում ՝ ԱԹՍ-ների միջոցով, ինչպես նաև հակառակորդի կողմից դիվերսիոն-հետախուզական խմբերի կիրառման հավանականությունը:

Միևնույն ժամանակ, տեղակայման վայրը պետք է ապահովի ստորաբաժանումների արագ տարակենտրոնացումը, գիշերը ճիշտ ուղղությամբ մաններելու հնարավորությունները, անձնակազմի գտնվելու վայրի և հանգստի հարմարավետությունը (հատուկ ուշադրություն է դարձվում անձնակազմի հանգստի վայրերում տեխնիկայի ժամանման բացառմանը):

Ժամանակակից պայմաններում ստորաբաժանումների գործողությունները գաղտնի պահելու նպատակով շրջանների զբաղեցումը հիմնականում կատարվում է գիշերը: Պայթուցիկ առարկաների և թունավոր նյութերի առկայության համար տարածքի ստուգումը, որպես կանոն, իրականացվում է ցերեկային ժամերին, որից հետո կազմակերպվում է դրա պաշտպանությունը:

Կազմակերպված տեղակայումն ապահովելու համար նպատակահարմար է տարածք ժամանող ստորաբաժանումներում նշանակել ուղեկցորդներ ցերեկային ժամերին:

Բացի հիմնական շրջանից նշանակվում է նաև տեղակայման պահեստային տարածք, որտեղ ստորաբաժանումները դուրս են բերվում հակառակորդի կողմից բարձր ճշգրտության կամ հրկիզող զենքերով հանկարծակի հարվածներ հասցնելու սպառնալիքի դեպքում: Երթուղին նախապես ուսումնասիրվում է ստորաբաժանումների հրամանատարների կողմից:

Մեքենայացված և տանկային ստորաբաժանումները տեղակայվում են նշված տարածքներում՝ մթության պայմաններում, հիմնականում առաջխաղացման ուղիների երկայնքով՝ օգտագործելով պաշտպանիչ և քողարկող տարրեր, մասնավորապես՝

- տանկերի, ՀՄՄ-ների և ԶՓՄ-ների պաշտպանությունն ապահովելու համար օգտագործվում են կիրճերը, ձորակները, քարհանքերը և փոսորակները;
- անտառներում խորհուրդ է տրվում տանկերը և այլ մարտական մեքենաները տեղաբաշխել բացատների և անտառային ճանապարհների երկայնքով՝ խիտ ծառերի տակ;
- խուսափել ստորաբաժանումները էլեկտրահաղորդման գծերի տակ կամ գազատարների և նավթամուղերի մոտ տեղակայումից;
- պատրաստել ստորաբաժանումների տարածքից դուրս գալու և թշնամու հարձակումը հետ մղելու ընթացքում մաններելու ուղիներ (հագեցած համապատասխան նշաններով և ուղենիշներով, որոնք գիշերը հստակ տեսանելի կլինեն);
- անձնակազմը և ՍՌՏ-ն հակառակորդի բոլոր զենքերից պաշտպանելու համար տարածքում իրականացնել ինժեներական աշխատանքներ (անձնակազմը պետք է կառուցի բաց կամ ծածկված ճեղքեր տրանսպորտային միջոցների մոտ, իսկ եթե ժամանակը թույլ է տալիս՝ բլինդաժներ և պահեստային տարածքներ սպառազինության, մարտական և այլ տեխնիկայի, ինչպես նաև խրամատներ և ապաստարաններ ՆՏՄ-ի համար);
- սպառազինության և տեխնիկայի գտնվելու վայրերը, ինչպես նաև տրանսպորտային միջոցների հետքերը, հանգամանորեն քողարկվում են;
- անմիջական և պահակային պահպանությունը իրականացնողները պետք է ապահովեն գիշերային տեսողության սարքերով (ջերմատեսիլներով) և լուսարձակ սարքերով:

Քողարկման միջոցառումներ իրականացնելիս պետք է հաշվի առնել հակառակորդի կողմից հետախուզության տեխնիկական միջոցների, ինչպես նաև ԲՃԶ համակարգերի կիրառման հնարավորությունը: Հետևաբար, ստորաբաժանումները պետք է հմտորեն օգտագործեն քողարկման տեխնիկան և բնական դիմակները, որոնք թույլ կտան թաքցնել սպառազինությունը և ինժեներական կառույցների օպտիկական, ջերմային և ռադարային կոնտրաստները: Միևնույն ժամանակ, պետք է սահմանափակվի տեխնիկայի շարժը:

Անձնակազմը իրականացնում է լուսաքողարկման միջոցառումներ: Անվտանգության նկատառումներից ելնելով խորհուրդ է տրվում նշանակել մեքենայացված ստորաբաժանումներ, որոնք ուժեղացվում են հրետանիով, և նրանց հանձնարարել տարածքը լուսավորելու խնդրի իրագործումը:

Պարեկները առավել խոցելի են դիվերսիոն և հետախուզական խմբերի նկատմամբ, ուստի նրանք օգտագործում են միայն կապույտ ֆիլտրով լապտերներ, և նրանց երթուղիները նշանակվում են այլ անվտանգության տարրերի միջև՝ համակարգումը բարելավելու և թշնամու հարձակման ռիսկը նվազեցնելու համար:

Անմիջական պահպանություն ստեղծվում է գումարտակներում և վաշտերում:: Գումարտակում սա ներառում է զույգերով պարեկներ և դիտորդների անընդհատ հերթափոխ հրամանատարական և դիտորդական կետերում:

Բացի այդ, դասակի կազմում նշանակվում է հերթապահ ստորաբաժանում: Այն տեղաբաշխվում է գումարտակի հրամանատարի կողմից նշված վայրում և գտնվում է մշտական պատրաստականության վիճակում՝ հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի ոչնչացման և հանկարծակի առաջացող այլ խնդիրների կատարման, ինչպես նաև տեղաբաշխման շրջանում և դրա մոտակայքում բռնկված հրդեհի մարման համար:

Վաշտում անմիջական պահպանությունը բաղկացած է վաշտի գտնվելու վայրի շուրջ պարեկությունից և հրամանատարական ու դիտորդական կետում դիտորդների մշտական հերթապահությունից: Բացի այդ, անձնակազմի, զենքի և մարտական տեխնիկայի պահպանության համար նշանակվում է ամենօրյա վերակարգ:

Պահակախմբի կազմը ներառում է.

- պահակային ջոկատներ,
- պահակային ուղեկալներ,
- պահակակետեր (պոստեր),
- գաղտնապահակներ:

Պահպանության ստորաբաժանումների քանակը, կազմը և հեռավորությունը պայմանավորված են հակառակորդի գործողությունների հեռավորությամբ և բնույթով, պահպանվող ուղղության կարևորությամբ, պահպանվող ուժերի տեղակայման համար անհրաժեշտ ժամանակով, տեղանքի բնույթով և դիտարկման պայմաններով:

Պահակային ջոկատները և պահակային ուղեկալները նշանակվում են ավագ հրամանատարի կարգադրությամբ, պահակակետերն (պոստերն) ու գաղտնապահակները գումարտակի պահակային պահպանության հիմքն են:

Պահակային ջոկատների կազմում նշանակվում են ուժեղացված վաշտեր, իսկ պահակային ուղեկալի կազմում ՝ ուժեղացված դասակներ: Երբեմն պահակային ջոկատների կարևոր ուղղություններում կարող է լինել գումարտակի ուժեր: Այդ դեպքում պահակային ջոկատը պահակային ուղեկալի համար կարող է նշանակել ուժեղացված վաշտեր:

Պահակակետերը(պոստերը) տեղադրվում են վտանգավոր ուղղություններում: Դրանք կարող են բաղկացած լինել ջոկերից (տանկերից):

Պահակակետը (պոստը) , որպես կանոն, զբաղեցնում է շրջանաձև դիտարկում և կրակի վարում ապահովող դիրք: Դիրքը հագեցնում են խրամատներով և անպայման քողարկում:

Գաղտնապահակները նշանակվում են գումարտակի գտնվելու վայրի տարածքի թաքնված մատույցներում: Գաղտնապահակների կազմը երկու-երեք հոգի է:

Հակառակորդի հետախուզական-դիվերսիոն խմբերի հավանական շարժման ուղիներում տեղադրվում են ազդանշանային ականներ, 1К124 «Табун» փոքր չափի հետախուզական- ազդանշանային սարքավորումներ:

Գիշերային պայմաններում մեծ նշանակություն ունի ճանաչման կազմակերպումը: Ինչի համար կիրառվում են ՍՌՏ-ի և անձնակազմի հանդերձանքի պիտակավորումը:

Հրամանատարներն ու շտաբները պետք է հիշեն, որ հակառակորդը իրականացնում է ոչ միայն օպտիկական հետախուզություն, ուստի պարզապես լուսային դիմակ կրելը չի պաշտպանում այլ տեխնիկական միջոցներով իրականացվող հետախուզությունից: Հրամանատարների ու շտաբների պարտականությունն է տեղեկատվություն հաղորդել հակառակորդի հետախուզական միջոցների առկայության և արդյունավետ հակազդեցության մասին:

Աղբյուրը՝ https://vk.com/wall-50957736_602633?ysclid=mghwkk02b1206813422